Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

116

ՈՐԻՆԱԿԵԼԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԱԿՈՒՄԲԻ, „ԿԱՐՄԻՐ ԱՆԿՅԱՆ“
ՅԵՎ ՖԻԶԿՈՒԼՏԻ ԽՄԲԱԿԻ

№ 22

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՇՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ

ԵՐԵՎԱՆ 1925

ՀԱՄԽ-Ի ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՄԲ ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ ՅԵՎ ՎԱՃԱՌՎՈՒՄ ԵՆ

1. Ա. ԼԱԶՈՎՍԿԻ. — «Հոսանքների պայքարը համաշխարհային արհեստարժան մեջ» — (սպառված)
2. » «Արհմիությունների խնդիրներն ու գործելակերպը» (սպառված).
3. ԵՅԴՈՒՍ. — «Ակնարկներ Արևելքի բանվորական շարժման մասին (սպառված)
4. ԱՐԿ—ԱՆ. — «Բանվորական շարժման պատմությունը Անգլիայում, Գերմանիայում և Ֆրանսիայում (մնացել են սակավաթիվ օրինակներ) . . . . . գինն է 75 կ.
5. — «Գործարկոմների և տեղկոմների ուղեցույց» . . . . . » 1 ռ.
6. — «Աշխատանքի Որենսգիրք» . . . . » — 15 կ.
7. ԱՆՏՈՇԿԻՆ. — «Պրոֆեսիոնալ շարժումը Ռուսաստանում» . . . . . » — 60 կ.
8. ՍԵՆՅՈՒՇԿԻՆ. — Գործարկոմների և տեղկոմների անելիքները ներկա պայմաններում» . . . . . » — 25 կ.
9. ԳՈՒՐԵՎԻՉ. — «Լենինը և արհեստակցական միությունները» . . . . . » — 50 կ.
10. ԲԻԽՈՎՍԿԻ. — «Բանվորների և ծառայողների ապահովագրումը հաշմանդամության դեպքում» (սպառված) . . » — 20 կ.
11. ՖԱԲՐԻԿԱՆՏ. — «Սոցիալական ապահովագրությունը» (սպառված) . . . . . » — 20 կ.
12. ՏԵՏԵՐԻՆ. — «Ի՞նչ է արհմիության կանոնադրությունը» . . . . . » — 25 կ.
13. ՍՊԵՐԱՆՍԿԻ. — «Ի՞նչ պետք է իմանա ամեն մի մայր» . . . . . » — 20 կ.

1 C 2017

Գրքատարեր բոլոր յարկերների. մեքենք.

ՈՐԻՆԱԿԵԼԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԱԿՈՒՄԲԻ, „ԿԱՐՄԻՐ ԱՆԿՅՈՒՆԻ“ ՅԵՎ ՖԻԶԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԽՄԲԱՄԱԿԻ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ

ԵՐԵՎԱՆ 1925

1/3

ԱՐՑԱԽԻ ՀԱՍՍՐ
Հայաստանի Գրքերի Պալատ
1-23869

ՏՐԵՍՏԻ ԱՌԱՋԻՆ ՏՊԱՐԱՆ

Գրառ. 37թ. Պատ. 3588 Տիր. 2000

ՅԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Մեր խորհրդային հայրենիքի տնտեսական դրությունն ամրանալով, աճում և ամրապնդվում և արհեստակցական շարժում։

Կյանքի բարեկարգման ու կոմունիստական շինարարությանը համընթաց, զարգանում է մեր բանվորական—աշխատավորական մասսաների կուլտուրական մակարդակը ծիլեր և արձակում, նոր աշխատանքային կյանքը։

Անհրաժեշտ է ոգնել, ուղղություն տալ, բանվորական աշխատավորական մասսաների մեջ կուլտուր-կրթական աշխատանքներ տանող մարմիններին։

— Իսկ վորոնք են, արհմիությունների մասսայական կուլտուր-կրթական մարմինները։

— Կուլտ-կոմիսիաները և ակումբների վարչությունները։

Կուլտ-կոմիսիաների աշխատանքին ոգնելու համար, արդեն հրատարակել ենք «կուլտ-կոմիսիաների որինակելի կանոնադրությունը»։

Այդ կանոնադրությունը մեծ չափերով կսմանդակի կուլտ կոմիսիաներին, կպարզի նրանց անելիքները։

Այս գրքույկում լույս է տեսնում բանվորական ակումբի, միությունական «կարմիր ան-

կյունների և ֆիզկուլտի խմբակների որինակելի կանոնադրությունները։

Այս յերեք կանոնադրություններն ել դեկավարող ցուցմունքներ և ուղղություն են տալու մեր արհմիությունների ակումբային աշխատանքներին։

Ակումբները բանվորական կենցաղի մի անբաժան մասն են կազմելու։ Ակումբային աշխատանքները մեր արհմիությունների ուշադրության կենտրոնում պիտի դրվեն։

Լավ պիտի գիտակցել, վոր բանվորական կենցաղը՝ դարավոր սովորությունների, նիստ ու կացի արդյունք է. միայն ակումբային աշխատանքների միջոցով է վոր հին կենցաղի փոխարեն կարող ենք ստեղծել նորը, կոմունիստականը։

Այս կանոնադրությունները մեծապես կոչնեն արհմիություններին՝ մասսաներին դեպի ակումբները քաշելու, ակումբային աշխատանքները ցանկալի ընթացքի մեջ դնելու և նրանց ծաղկումը ապահովելու համար։

Ղեկավարվենք նրանցով։

Հ. Ա. Մ. Խորհրդի
Կուլտ Բաժնի վարիչ՝ Հ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

I

ԱԿՈՒՄԲԻ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Բանվորական ակումբը միությունական կուլտաշխատանքների կենտրոնն է. նրա նպատակն է։

1. Քաղաքականապես դաստիարակել բանվորական մասսաները, այդ դաստիարակության հիմք ընդունելով միությունական և արտադրողական խնդիրները, ձևավորել բանվորների հեղափոխական դասակարգային ինքնագիտակցությունը, բարձրացնել նրանց ակտիվությունն ու ինքնագործունեությունը։

2. Բավարարել բանվորների կուլտուր-կենցաղային պահանջները, համախմբել նրանց միության շուրջը, որվա քրտնաջան աշխատանքից հետո նրանց համար ակումբում իմաստալից զվարճություն կազմակերպել և հանգստի հնարավորություն ստեղծել, բարձրացնել բանվորի ու նրա ընտանիքի կուլտուրական պատրաստության մակարդակը։

3. Մասսայական ֆիզկուլտուրայի և սպորտի զարգացման միջոցով ֆիզիքապես առողջացնել պրոլետարիատը։

II

ԱԿՈՒՄԲԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐԸ

Վերոհիշյալ նպատակներին հասնելու համար, ակումբը մասսայական և խմբակային աշխատանք է կատարում։

1. Մասսայական աշխատանքը կայանում և նրանում, որ ակումբը կազմակերպում է.

ա) Առողջ, հանգիստ և իմաստալից զվարճություններ.

բ) Դասախոսություններ, դիսպուտներ, մինինգներ, ընթերցումներ և զրույցներ.

գ) Ներկայացումներ, համերգներ, ինքնագործունեության յերեկոներ, գրական և յերաժշտական յերեկոներ, հարց ու պատասխանի յերեկոներ, միությունական կամպանյաներ, այս կամ այն դատի ինսցենիրովկա, իլյուստրատիվ յերեկոներ, հեղափոխական առնախմբություններ և տոնակատարություններ, կինոսեանսներ և այլն։

դ) Բնագիտական, արհեստակցական, արտադրողական, գեղարվեստական պատմական և այլ դրոսաններ և եկսկուրսիաներ։

յե) Կենդանի (բանավոր) և պատի լրագիր։

զ) Իր դահլիճը տրամադրում է տեղական ակումբի, կոմբջիջների, ակումբի վարչության և ներկայացուցչական ժողովների դռնբաց նիստերին։

է) Բաց է անում գրադարաններ ու ընթերցարաններ, որոնք ոչ թե միայն ակումբի անդամների կարիքներին են ծառայում, այլ և ակումբի խմբակների, դասախոսների և առհասարակ ամբողջ ակումբի կարիքներին։

ը) Կազմակերպում է ցուցահանդեսներ, նվիրված արտադրությանը, արհեստակցական շարժմանը, բանվորների աշխատանքին ու կենցաղին, սանիտարային, պրոֆիլակտիկ առողջապահությանը և այլ հարցերին։

թ) Կազմակերպում է միութենական, խորհրդային և կուսակցական կյանքի, աշխատանքի ու կենցաղի և այլ հարցերին նվիրված տեղեկատուներ։

2. Կազմակերպում է.

ա) Քաղաքագիտության և մարքսիստական խմբակներ.

բ) ամբողջ արհեստակցական շարժման, ինչպես և արհեստակցական աշխատանքի առանձին ճյուղերի (տարիֆային, աշխատանքի պաշտպանության և այլն) վերաբերվող հարցերն ուսումնասիրող խմբակներ.

գ) արտադրողական, գիտական-տեխնիկական, աշխատանքի գիտական կազմակերպության վարպետի բարձրացման խմբակներ.

գ) գործնական գիտելիքների՝ կարի, ձևի, կաղմարարության և այլն խմբակներ։

յե) գիտության այս կամ այն ճյուղի, ուսարլեզուների ուսումնասիրության ինքնակրթության խմբակներ.

զ) անգրագիտության և կիսագրագիտության վերացման խմբակներ.

ե) ֆիզկուլտուրայի և սպորտի խմբակներ.

ը) գրական, լրագրային աշխատանքի և դրամատիկական, յերաժշտական, խմբական յերգի ու կերպարվեստից խմբակներ։

ԾԱՆՈԹ.—1-ին, Խմբակները կազմվում են միայն կարիքը ներկայանալու դեպքերում։

ԾԱՆՈԹ.—2-րդ, Ակումբի բոլոր խմբակները պետք է ունենան աշխատանքի մի ընդհանուր պլան, որը պետք է հաստատված լինի ակումբի վարչության կողմից, խմբակների աշխատանքի պլանները պետք է համաձայնեցրված լինեն իրար հետ։

3. Ակումբներին կից կարելի յե բանալ հանրակրթության դասընթացներ և անգրագիտության ու կիսագրագիտության վերացման դրպրոցներ՝ հասակավորների համար։

III

ԱԿՈՒՄԲԻ ԿԱԶՄԸ ՅԵՎ ՆՐԱ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Բանվորներին լավագույն կերպով ակումբի շուրջը համախմբելու և նրանց ակտիվությունը յերևան հանելու համար, բանվորական ակումբները պետք է ղեկավարվեն անհատական անդամության սկզբունքով. անդամավճարը պետք է բոլոր բանվորների համար մատչելի լինի։

2. Ակումբի անդամ կարող են լինել բոլոր, 18-ից վոչ պակաս տարիք ունեցող բանվորները, յեթե նույնիսկ արհմիության անդամ չլինեն բայց այդպիսին դառնալու իրավունք ունենան, բանվորների ընտանիքների անդամները, ինչպես և վոչ այն միության անդամները, վորին պատկանում է ակումբը։

ԾԱՆՈԹ,—Ակումբն այցելել կարող են արհմիության յուրաքանչյուր անդամ, ինչպես և ամեն մի բանվոր. այդ իրավունքն ունեն նաև նրանց ընտանիքի անդամները։

3. Ակումբի անդամները պետք է ցուցակագրվեն ակումբում և կանոնավոր կերպով մուծեն իրենց անդամավճարները։

ԾԱՆՈԹ 1.—Գործազուրկներն ազատվում են անդամավճարից։

ԾԱՆՈԹ. 2.— Ակումբի անդամությունից

դուրս յեկողներին նրանց մուծած մուտքի դրամներն ու անդամավճարները չեն վերադարձվում։

4. Ակումբի բոլոր անդամները մասնակցում են ակումբի աշխատանքներին, իրենց ծառայությունն են մատուցում ակումբին և կատարում են կանոնադրությամբ և ակումբի անդամների ընդհանուր ժողովների ու ղեկավար մարմինների կողմից իրենց վրա դրվող բոլոր պարտականությունները։

5. Ակումբի անդամներն անդամությունից հեռացվում են հետևյալ դեպքերում.

ա) յեթե հասարակական հանցանք են գործում.

բ) յեթե առանց հարգելի պատճառի յերեք ամիս անդամավճար չեն տալիս.

գ) յեթե չեն յենթարկվում կանոնադրության պահանջներին և տարրական ընկերական կարգապահության։

ԾԱՆՈԹ.— Կամովին հեռացող անդամները համապատասխան գրավոր հայտարարություն են տալիս ակումբի վարչությանը։

6. Անդամությունից հեռացնելու խնդիրը լուծում է ակումբի անդամների ընդհանուր ժողովը ներկա յեղողների ձայների 2/3 ի մեծամասնությամբ։ Յերբ այս կամ այն անդամի հեռացման հարց է հարուցված, ակումբի վարչություն կարող է զրկել նրան ակումբի աշխատանքներին մասնակցելու իրավունքից՝ մինչև նրա հեռացման հարցի լուծումն անդամների ընդհանուր ժողովում։

IV

ՅԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՍԵԿՑԻԱՆԵՐԸ

Յեթե ավյալ վայրում յերիտասարդական ակումբ չկա, ԼԿՅԵՄ համապատասխան մարմինների համաձայնությամբ միության ակումբներին կից կարելի է յերիտասարդական սեկցիաներ ստեղծել։

2. Յերիտասարդական սեկցիաները միավորում են մինչև 14 տարեկան հասակի յերիտասարդներին։

3. Յերիտասարդական սեկցիայի աշխատանքի պլանը պետք է համաձայնեցնել ԼԿՅԵՄ հետ և մտցնել ակումբի ընդհանուր քաղաքական-տարակիչական սիստեմի մեջ։

4. Յերիտասարդական սեկցիայի ֆինանսական—տնտեսական մասը վարում է ակումբի վարչությունը։ Սեկցիան ինքնուրույն ապարատ չպետք է ունենա։

ԱԿՈՒՄԲԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

1. Ակումբի գործունեությունը ղեկավարում է ակումբի ընտրովի վարչությունը, որը գործում է միության համապատասխան որգանի (տեղկոմ, արհմիության գավլիազոր) և ակումբի անդամների ընդհանուր ժողովի ընդհանուր ղեկավարությամբ։

2. Ընդհանուր ժողովը լուծում է բոլոր սկզբունքային բնույթ ունեցող խնդիրներն, ընտրում է վարչության և վերստուգիչ հանձնաժողովի անդամներին, հաստատում է ակումբի աշխատանքի պլանն ու հաշվետվությունը, ընդունում և արձակում է ակումբի անդամներին։

Ընդհանուր ժողովները լինում են՝ հերթական և արտակարգ։

4. Ընդհանուր ժողովն որինական է համարվում, յերբ ներկա յե անդամների կեսը։

ԾԱՆՈԹ. — Յեթե առաջին ժողովը տեղի չի ունեցել անդամների կիսից պակասը ներկա լինելու պատճառով, յերկրորդ ժողովն որինական է համարվում, անկախ ներկաների թվից և նշակվում է վոչ ուշ, քան առաջին ժողովից մեկ շաբաթ հետո։ Յերկրորդ ժողովի որակարգում պետք է լինեն միայն այն հարցերը, որ դրված են յեղել առաջին չկայացած ժողովում։

5. Հերթական ժողովները հրավիրվում են առնվազն յերկու ամիսը մեկ անգամ, իսկ արտակարգ ժողովները հրավիրվում են՝

ա) ակումբի վարչության, վերստուգիչ հանձնաժողովի և համապատասխան արհեստակցական կազմակերպության վորոշմամբ.

բ) ակումբի անդամների թվի $^1/_{10}$-ից վոչ պակասի դրավոր ստորագրությամբ։

6. Ակումբի ղեկավար մարմինը նրա վարչությունն է, որ ընտրվում է 6 ամիս ժամանակով։ Վարչության անդամների թիվը վորոշում է ընդհանուր ժողովը. վարչության կազմը հաստատվում է արհմիության համապատասխան կազմակերպության կողմից և ցուցակագրվում է տեղական քաղուսհիմնարկում։

7. Ակումբի վարչությունն իր կողմից ընտրում է մշտապես գործող նախագահություն, որը պետք է բաղկացած լինի՝ նախագահից, վարչության քարտուղարից և ակումբի գանձապահից։

8. Ակումբի վարչության յուրաքանչյուր անդամ պատասխանատու յե ակումբի վարչության ամբողջ գործունեության համար և ղեկավարում է ակումբային աշխատանքի այս կամ այն ճյուղը։

9. Վարչության նիստերը տեղի յեն ունե-

նում հարկը պահանջած դեպքերում, բայց շաբաթը մեկ անդամից վոչ պակաս։

10. Ակումբի վարչությունը կարող է իրավունք տալ ակումբի բոլոր մշտական ակտիվ աշխատողներին, ինչպես որինակ՝ գրադարանապետին, խմբակավարին և այլն, վոր խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցեն վարչության աշխատանքներին։

11. Ակումբի վարիչը, յեթե նույն իսկ ընտրված չի ընդհանուր ժողովում, այլ վարձված է վարչության կողմից, այնուամենայնիվ մասնում է վարչության մեջ, վճռական ձայնի իրավունքով և գործադրում է վարչության բոլոր վորոշումները։ Ակումբի վարիչը, վորպես վարչությանը հաշվետու անձնավորություն, չի կարող միևնույն ժամանակ լինել վարչության նախագահ կամ նրա տեղակալ և վոչ էլ կարող է վերստուգիչ հանձնաժողովի անդամ լինել։

Ակումբի վարիչին ընտրում է վարչությունն ակումբի անդամների միջից, կամ ծառայության կանչում դրսից, քաղլուսվարի համաձայնությամբ։

Վարիչին իր պաշտոնում հաստատում է արհմիության համապատասխան մարմինը։

VI

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

1. Ակումբի վարչությունը կազմակերպում է ակումբի աշխատանքի, նրա հաճախման և գրական–նյութական ծախսերի ամենորյա հաշվառում և յերկու ամիսը մեկ անգամից վոչ ուշ՝ հաշիվ է տալիս ընդհանուր ժողովին ու գրավոր հաշվետվություն է ներկայացնում միության համապատասխան կազմակերպությանը։

ԾԱՆՈԹ. Ակումբի գործունեությանը վերաբերվող գրավոր հաշվետվությունը կախված է ակումբի աշքի ընկնող տեղում՝ ի տեղեկություն ակումբի բոլոր անդամների։

2. Ակումբի գրական-նյութական հաշվետվության ուսումնասիրման համար ընդհանուր ժողովը վեց ամիս ժամանակով ընտրում է վերստուգիչ հանձնաժողով, բաղկացած յերեք անդամից և յերկու փոխանդամից։

ԾԱՆՈԹ,—Ակումբի աշխատանքին իրավունք ունեն վերահսկելու միության համապատասխան կազմակերպությունները, ինչպես և պետական մարմինները (Բաղլուսվարը, ԲԴՏ)։

VII

ԱԿՈՒՄԲԻ ՄԻՋՈՑՆԵՐՆ ՈՒ ԳՈՒՅՔԸ

1. Ակումբը պահվում է անդամավճարնե-

րից գոյացած գումարով, համապատասխան միությունական կազմակերպության կուլտ-ֆոնդից հատկացված միջոցներով, կուլտաշխատանքի համար տնտեսական ժարմինների կատարած հատկացումներով, զանազան նպաստներով, ակումբի անդամների կամավոր հատկացումներով, նպաստիչ կուլտուրական ձեռնարկումների (համերգներ, յերեկույթներ, բուֆետներ) յեկամուտով և այլն։

2. Ակումբի բոլոր ծախսերը, կատարվում են համաձայն վաղորոք կազմված նախահաշվի, որ պետք է հաստատված լինի համապատասխան միությունական կազմակերպության կողմից։ Վարչությունը պատասխանատու յե համապատասխան միութենական կազմակերպության և ակումբի անդամների ընդհանուր ժողովի առաջ՝ իրեն տրվող բոլոր նյութական միջոցների և ակումբի դույքի համար։

3. Մուտքի և անդամակցական վճարների չափը սահմանվում է՝ ակումբի անդամների ընդհանուր ժողովում և հաստատվում է համապատասխան միությունական կազմակերպության կողմից։

ԾԱՆՈԹ,—Մուտքի վճարը պետք է լինի ոչ ավելի 20 կոպեկից և ամսավճարը ոչ ավելի մեկ չորրորդ տոկոսից։

4. Ակումբը կարող է որինական ճանապարհով և առանց նախահաշվի սահմաններից յելնելու ձեռք բերել այս կամ այն դույքը, միության համապատասխան մարմնի իրավասության սահմաններում կնքել զանազան պայմանագրեր և, համապատասխան միությունական կազմակերպության հաստատությունն ստանալով իր վրա վերցնել այս կամ այն պարտավորությունը։

VIII

ԱԿՈՒՄԲԻ ԼԻԿՎԻԴԱՑԻԱՆ

1. Ակումբի լիկվիդացիան տեղի յե ունենում.

ա) Համաձայն ակումբի անդամների ընդհանուր ժողովի ձայների $^2/_3$ մեծամասնության ընդունած և համապատասխան միությունական կազմակերպության հավանության արժանացած վորոշման.

բ) Համաձայն համապատասխան միությունական կազմակերպության վորոշման։

2. Լիկվիդացիայի յենթարկվող ակումբի դույքը և դրամական միջոցներն անցնում են արհեստակցական միության համապատասխան կազմակերպության կուլտ-կրթական ֆոնդին։

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

Միութենական բանվորական ակումբի որինակելի կանոնադրությունն ընդգրկում է ակումբի ստեղծման կազմակերպչական կողմի հիմնական մոմենտները։ Կոնկրետ հարցերի մանրամասն մշակումը չեր կարող տեղ գտնել «կանոնադրության» մեջ։ Սույն ցուցումները գալիս են լրացնելու «կանոնադրության» այդ բացերը։

ԱԿՈՒՄԲԻ ԿԱՆՈՆԱՎՈՐՈՒՄԸ

Ակումբը պետք է այնպես կանոնավորված լինի, որ ունենա մաքուր և հարմարավոր արտաքին և վառ կերպով արտահայտված արհեստակցական արտադրական ու քաղաքական—ագիտացիոն գունավորում։ Ակումբին կից պետք է բացել բուֆետ կամ ճաշարան և կահավորել զբաղմունքի և հանգստյան առանձին-առանձին տեղյակներ։

ԽՄԲԱԿՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ

1. Ակումբի խմբակների աշխատանքները պետք է դնել այնպիսի հիքմերի վրա, որ խմբակները չպարփակվեն իրենց մեջ, այլ մասսայական աշխատանք կատարեն ակումբի անդամների շրջանում և ծրագրով ու կազմակերպչորեն միավորված լինեն իրար հետ։

2. Ակումբի խմբակների աշխատանքների համաձայնեցման և նրանց միջև սերտ կապ ստեղծելու նպատակով, պարբերաբար հրավիրվում են խմբակավարների խորհրդակցություններ, ինչպես և ակումբի բոլոր խմբակների անդամների ընդհանուր ժողովներ։

3. Ակումբի խմբակները չեն սահմանափակվում այս կամ այն հարցի ուսումնասիրությամբ, այլ և իրենց վրա յեն վերցնում ակմբային աշխատանքի այս կամ այն ճյուղին նպաստելու գործը այսպես որինակ՝ գեղարվեստական խմբակները զարդարում են ակումբը, պատրաստում նրա բեմի դեկորները, գրում ու նկարում են աֆիշներ ու պլակատներ, կազմակերպում են ինսցենիրովկաներ, յերեկոներ, դիսպուտներ, դասեր և այլն. գիտական խմբակները կազմակերպում են՝ ռեֆերատներ, ցուցահանդեսներ, անկետաններ և այլն։

4. Արվեստի այս կամ այն ճյուղը լրջորեն ուսումնասիրելու համար բացվում են ստուդիաներ, բայց միայն այն դեպքում, յերբ այդ ստուդիաների գոյության և աշխատանքի համար կան նպաստավոր պայմաններ (նյութական միջոցներ, դասատուների կադր և այլն)։

ԱԿՈՒՄԲԻ ԿԱԶՄԸ ՅԵՎ ՆՐԱ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Անդամավճարներն ընդունում է ակումբի գանձապահը, իսկ այդպիսին չլինելու դեպքում՝ վարչության հերթապահ անդամը։

ԾԱՆՈԹ. — Անդամավճարների մուծումը գրանցվում է անդորրագրերի գրքույկներում, որը պետք է կնքված լինի ակումբի կնիքով. այդպիսին չլինելու դեպքում գրքույկները պետք է ստորագրված լինեն վարչության նախագահի կամ քարտուղարի կողմից.

2. Եթե ակումբները պատկանում են այնպիսի ձեռնարկությունների, որոնք իրենց աշխատանքով կապված են շրջակայքի գյուղացիության հետ, ակումբ հաճախելու իրավունք պետք է տալ նաև շրջակա գյուղերի բնակչությանն ու յենթաշեֆ գորամասի կարմիր բանակայիններին։

3 Ակումբի անդամների ակտիվ մասնակցությունն ակումբի աշխատանքներին և ակումբին մատուցելիք ծառայությունը կայանում է հետևյալում.

ա) անդամները մասնակցում են ակումբի խմբակներին, գրույցներին, ժուրնալին, պատկերագրին, կենդանի լրագրին, ներկայացումներին, ինոցենիրովկաներին, համերգներին, յերեկույթներին, ցուցահանդեսներ, եքսկուրսիաններ, «հանդիսություններ» կազմակերպելու աշխատանքներին, դեպի ակումբ նոր անդամներ գրավելու համար մղվող ագիտացիային.

բ) Հերթապահություն են անում ակումբում և նրան կից հաստատություններում (գրադարան, ընթերցարան, տեղեկատու բյուրո և այլն).

գ) Իրենց ծառայության են մատուցում ակումբին կամ նպաստում են նրա այս կամ այն ձեռնարկության հաջողությանը, — պատրաստում և փակցնում են աֆիշներ, կատարում են կասսիրի պաշտոն, հսկում են կարգապահությանը, ստուգում են տոմսերը (билетерство), հերթապահություն են անում հանդերձարանում, բուֆետում, կատարում են թեթև նորոգումներ, մաքրում են ակումբի շենքը և այլն։

4. Ակումբի անդամների մեջ ակտիվություն զարթեցնելու և վառ պահելու համար դիմում են հետևյալ միջոցներին.

ա) Նոր անդամ ընդունելիս, վարչության հերթապահ անդամը վաղորոք ծանոթացնում է նրան ակումբի նպատակների ու խնդիրների հետ, ավյալ ակումբի աշխատանքի բնույթին ու տեսակներին և բացատրում է ակումբի անդամի իրավունքներն ու պարտականությունները։

բ) Ակումբի անդամ ընդունվողին պետք է

թույլ տալ, վոր մասնակցի ակումբի կյանքին ու աշխատանքին, հենց վոր վարչության հերթապահ անդամը ակումբի անդամների թեկնածուների ցուցակի մեջ մացնի նրան, սակայն նորեկին ակումբի անդամի տուս չպետք է տալ, մինչև վոր ընդհանուր ժողովը նրան անդամ չը հաստատի։

գ) Կարելույն չափ հաճախ հրավիրել ակումբի անդամների ընդհանուր ժողովներ, ոգտագործելով ակումբի առորյա կյանքի բոլոր այն հարցերը, վորոնք կարող են կենդանի հետաքրքրություն զարթեցնել ակումբի անդամների լայն մասսայի մեջ, և այդ մասսայի ակտիվ ուշադրությունը գրավել դեպի ակումբի կյանքը.

դ) Ակումբի անդամներին հանձնարարություններ տալուս նկատի առնել նրանց ընդունակություններն ու անհատական հակումները և միայն այնպիսի աշխատանք տալ, վորը կարող է նրանց կենդանի և անմիջական կերպով հետաքրքրել։

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Ակումբի անդամներին ակումբի կյանքին ու գործունեությանն ակտիվ մասնակցության կանչելու նպատակով, կարելի է ակումբային աշխատանքի զանազան ասպարեզներին նվիրված հանձնաժողովներ կազմել. այդպիսիքեն, որինակ՝ տնտեսական, անգրագիտության վերացման, այս կամ այն խմբակ ստեղծելու հան-նաժողովները և այլն։

2. Հանձնաժողովները կարող են լինել մշտական և ժամանակավոր։

3. Մշտական հանձնաժողովները վերընորոգվում են ակումբի անդամների ընդհանուր ժողովներում յերկու-յերեք ամիսը մեկ անգամ։ Ժամանակավոր հանձնաժողովներն իրենց վրա դրված պարտականությունները կատարելուց հետո լուծվում են։

4. Հանձնաժողովներն ոժանդակիչ, գլխավորապես, կատարողական աշխատանք են կատարում ակումբի վարիչի անմիջական ղեկավարությամբ։ Հանձնաժողովների նախաձեռնությունն, ինչպես գործնական, այնպես ել սկզբունքային հարցերում ակումբի վարիչի և վարչության կողմից ամենաուշադիր վերաբերմունքի պետք է արժանանա։

5. Ակումբի ամենաակտիվ անդամներից կարելի յե ակումբային աշխատանքին նպաստող մարմիններ ստեղծել (բուֆետին, գրադարանին նպաստող և այլն), վորոնք հանձնաժողովների և խմբակների հետ միասին, կարող են վարչությանը կից խորհուրդ (խորհրդակցական իրա-

վունքներով) կազմել, վորի միջոցով վարչությունն իր աշխատանքը կկատարի։

ԱԿՈՒՄԲԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1. Ակումբի վարչությունը կազմում է ակումբի աշխատանքի պլանը, ուրվագծում է գործնական ձեռնարկությունները և քննում է ակումբի նախահաշիվը՝ տեղկոմի կամ արհմիության հաստատման մարմնին վերջնական հաստատության ներկայացնելու համար։

2. Վարչությունը կատարում է բոլոր վարչական ֆունկցիաները. մշակում է ակմբի ներքին կյանքը կարգավորող կանոններ ու հրահանգներ,— հսկում է ակումբի կյանքին ու աշխատանքին, ինչպես և նրա ներքին կարգ ու կանոնին,— ցուցակագրում է նոր անդամներին, նշանակում և արձակում է պաշտոնյաներին, հսկում է ակումբի տնտեսությանը, ստուգում է հաշվետվությունը։

3. Ակումբի ամենորյա գործնական աշխատանքին վերահասու լինելու համար, վարչությունն իր կազմից ամեն որ հերթապահներ և նշանակում, վորոնց պարտականությունն է՝ ընդհանուր վերահսկողություն ունենալ ակումբի կյանքի և աշխատանքի, իրչպես և նրա կարգու կանոնի վրա, ցուցակագրել նոր անդամների,

ընդունել վարչությանը տրվող դիմումներն ու հայտարարությունները, բացատրություններ տալ ակումբի անդամներին և այցելուներին այս կամ այն հարցի մասին։

ԾԱՆՈԹ ՅԵԹՆ վարչության հերթապահ անդամն ակումբի վարչական ու տնտեսական աշխատանքի մեջ տեսնում է այնպիսի թերություններ ու բացեր, վորոնք կարելի չե անմիջապես վերացնել, պարտավոր է ակումբի վարիչի հետ համաձայնության գալով, անել այդ բանը։

4. Վարչությունը պարբերաբար լսում է ակումբի բոլոր կազմակերպությունների հաշվետվությունները (խմբակների, սեկցիաների, հանձնաժողովների և այլն)։

5. Ակումբի վարչության նախագահությունը ղեկավարում է ակումբի ամբողջ ամենորյա աշխատանքը և վաղորոք քննում ու առաջ է քաշում վարչության քննության լենթակա հարցերը։

6. Ակումբի վարչության կազմի մեջ են մտնում նաև ՌԿԿ (Բ) սորին բջիջների ու ԼԿՅԵՄ և կինարժինների ներկայացուցիչներ։

ԱԿՈՒՄԲԻ ՎԱՐԻՉԻ ՄԱՍԻՆ

1. Ակումբի վարիչը կազմակերպում է ակումբի ամբողջ ամենորյա աշխատանքը, կազմում է ամեն ամսվա աշխատանքի ծրագիրը,

վարչության նախագահության ուշադրությանն և առաջարկում վարչության քննության յենթարկելիք հարցերը, բանակցում է պատշաճ հիմնարկների և անձանց հետ՝ ակումբի աշխատանքի կազմակերպության հարցերի առթիվ, գտնում և հրավիրում է ակումբի աշխատողներ, ստանում է ակումբին հատկացվող նյութերն ու նպաստները, ակումբի ապարատի միջոցով սիստեմատիկ կերպով ուսումնասիրում է ակումբի անդամներին և ողջ բանվորական մասսային, թե ինչ ձեռնարկումներ է նախագծել ակումբը, հետևում է ակումբի աշխատակիցների աշխատանքին, կազմակերպում է ակումբի տնտեսական գործունեությունը (նախահաշիվ, գործավարություն, հաշվետվություն) և այլն։

2. Ակումբի վարիչը պատասխանատու է վարչության բոլոր վորոշումների կատարման համար։

3. Ակումբի վարիչը պետք է տեղյակ լինի ակումբի բոլոր կազմակերպությունների աշխատանքներին։ Այս նպատակով նա վճռական ձայնի իրավունքով մասնակցում է ակումբի բոլոր հանձնաժողովների աշխատանքներին, ներկա է լինում խմբակների և ստուդիաների զբաղմունքներին և այլն։

4. Ակումբի վարիչը պատրաստում է վարչության նիստերի զբաղմունքների նյութը և ամսեամիս հաշիվ է տալիս վարչությանն՝ ակումբի կատարած ամբողջ աշխատանքի մասին։

5. Ակումբի վարիչն ակումբի աշխատանքի տեսնողությամբ հաշվառումն է կատարում մի հատուկ որագրում, վորտեղ նշանակում է աշխատանքի այն վառ մոմենտները, վորոնք անկարելի կլինեն ընդհանուր թվանշանային հաշվառման յենթարկել (աշխատանքի ուղղությունը, բնույթը, ակումբի անդամների և հաճախորդների պահանջները, նրանց հետ ունեցած զրույցի տպավորությունը և այլն)։

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ

Ակումբի աշխատանքի հաշվառումը պետք է ընդգրկի թվական տվյալները (խմբակների և դասախոսությունների թիվն, ակումբի անդամների թիվը և այլն), աշխատանքի բնույթագրումը (աշխատանքի ուղղությունը, բնույթը, ակումբի անդամների պահանջները և այլն — գրի յեն առնվում ակումբի վարիչի և խմբակավարների որագրերում) և գրամատանենյութական հաշվետվությունը։

ՎԵՐՍՏՈՒԳԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ

1, Վերստուգիչ հանձնաժողովը ստուգում է ակումբի գրամատանենյութական հաշվետվու-

թյունը յուրաքանչյուր հաշվետու ընդհանուր ժողովից առաջ մեկ անգամ, բայց յեթե նա տեղեկություններ ե ստանում, վոր չարարկումներ կամ գանցառություններ են արվում, կարող ե ամեն ժամանակ պահանջել, վոր բոլոր տվյալներն ներկայացնեն իրեն ստուգելու։

2. Վերստուգիչ հանձնաժողովն ընտրում ե իր կողմից մի նախագահ և մի քարտուղար, վորոնք պատասխանատու յեն հանձնաժողովի աշխատանքների համար։

«ԿԱՐՄԻՐ ԱՆԿՅՈՒՆՆԵՐԻ» ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԸ

1. «Կարմիր անկյունների» կազմակերպություն յեվ նրանց աշխատանքի կարգը

1. «Կարմիր անկյուններ» կարող են կազմակերպվել բոլոր ձեռնարկներում և բոլոր բանվորական հանրակացարաններում, յեթե նրանց բացելն անհրաժեշտություն ե ներկայացնում։

2. «Կարմիր անկյունի» համար հատկացվում ե մեկ-յերկու սենյակից բաղկացած հատուկ բնակարան, նայած տեղական պայմաններին։ Հատուկ բնակարան հատկացնելը հնարավոր չլինելու դեպքում «կարմիր անկյունի» համար կարելի յե հարմարեցնել սեղանատան մի մասը, ձեռնարկության սրահներից մեկն ու մեկի մի «անկյունը» և այլն։

3. «Կարմիր անկյունի» բռնած տեղը հնարավորության սահմաններում պետք ե այնպես սարքված լինի, վոր դեպի ինքը գրավի բանվորին և նրան ամենից առաջ հանգստանալու հնարավորություն տա աշխատանքի ընդմիջման ժամանակ կամ բանվորական որը վերջանալուց հետո։ Իր սարքի մեջ «անկյունը» պետք ե ար-

տացողի մեր քաղաքական կյանքի, արհեստակցական շարժման և խորհրդային շինարարության ամենաակտուալ մոմենտները։

4. «Կարմիր անկյունը» վորոշ չափով կահավորված պետք է լինի. այնտեղ պետք է լինեն մի քանի սեղանակներ, աթոռներ, տաբուրետներ կամ նստարաններ։ Սեղանակների վրա՝ շախմատ, շաշկի, տախտա, նարդի, լրագրեր, ժուրնալներ։ Անհրաժեշտ է մի պահարան կամ դարակ, վորտեղ պետք է տեղավորվեն գրական, քաղաքական և արհեստակցական շարժման վերաբերող ամենահետաքրքրական գրքերը։ Դրանց կողքին «անկյունում» պետք է տեղ գտնեն նաև տեղեկանքներ բանվորական կենցաղի, արհեստակցական շարժմանը, սրտագրության, խորհրդային և կուսակցական շինարարությանը վերաբերվող հարցերի մասին, կոլեկտիվ պայմանագիրը, միության անդամի հիշելիքը (памятка) և քաղվածքներ աշխատանքի օրենսդրության հոդվածներից, միության և կուսակցության կանոնադրություններից և այլն։ Սակայն «կարմիր անկյունը» չպետք է հեղեղել տեղեկատու-քաղվածքային և ինստրուկտիվ նյութերով. այդ նյութերը պետք է տալ մասառ մաս և կարելուն չափ հաճախ փոփոխել ու թարմացնել։

«Կարմիր անկյունը» պետք է ծառայի տվյալ ձեռնարկի բանվորների կամ տվյալ բանվորական հանրակացարանի բնակիչների և նրաց ընտանիքի անդամների կարիքներին։

5. «Կարմիր անկյունը» տեղական կուլտհանձնաժողովի աշխատանքի բազան է և այդ հանձնաժողովն է, վոր ղեկավարում է անկյունի ամբողջ գործունեությունը։

ԾԱՆՈԹ. — Կուլտ-հանձնաժողով չունեցող ձեռնարկություններում ու հիմնարկներում «Կարմիր անկյունի» աշխատանքները ղեկավարում է տեղկոմի լիազորը։

6. «Անկյունի» աշխատանքներին բանվորները մասնակցում են կամավոր կերպով. աշխատանքն այնպես պետք է տարվի, վոր ժամանակի ընթացքում «անկյուն» հաճախող բանվորների մի մշտական ակտիվ կորիզ ստեղծվի ու ամրապնդվի։

7. «Կարմիր անկյունը» պետք է իր գործունեության ընթացքում կենդանի կապ հաստատի այն ակումբի հետ, վորին ամրացված է տվյալ ձեռնարկությունը (հիմնարկը)։

Ակումբի յուրաքանչյուր կազմակերպություն՝ գրադարան, քաղգրագիտության դպրոց, հանրակրթական դասընթացքներ, խմբակներ և այլն—պետք է նպաստեն «կարմիր անկյունի»

համապատասխան ձեռնարկումներին, նրանց ղեկավարների հետ հաժերաշխվելով։

II. «ԿԱՐՄԻՐ ԱՆԿՅՈՒՆԻ» ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՁԵՎԵՐՆ ՈՒ ՄԵԹՈԴՆԵՐԸ

1. «Կարմիր անկյունը» ծառայելու է շարքային սակավ ակտիվ բանվորների և բանվորուհիների կարիքներին և նրա աշխատանքը պետք է մասսայական քաղաքաշխատանքի բնույթ կրի։

2 «Կարմիր անկյունը» ծավալում է հետևյալ աշխատանքները.

ա) գիրք է տալիս տանը կարդալու համար։

բ) լույս է ընծայում պատի լրագիր.

գ) Կազմակերպում է բարձրաձայն ընթերցում.

դ) զրույցներ (յեթե կարելի է՝ նաև դեկուցումներ ու դասախոսություններ).

ե) հարց ու պատասխանի յերեկոներ.

զ. խորհրդային շինարարության և արհեստակցական շարժման հարցերին նվիրած տեղեկատու բյուրո (բյուրոյին հերթապահելու յենկուլտ-հանձնաժողովի անդամները)։

ԾԱՆՈԹ.—«Կարմիր անկյուններին» կից խմբակներ կազմակերպելը գործնականապես անհրաժեշտ է։ Յեթե «անկյունի» հաճախողներից ստեղծվի բանվորների ակտիվ կորիզ և խմբակ կազմելու ցանկություն հայտնի, «անկյունի» ղեկավարը պետք է միջոցներ ձեռք առնի և նրանց անդամագրի ակումբին ու մասնակից դարձնի համապատասխան խմբակների աշխատանքներին։ Բացառիկ դեպքերում «կարմիր անկյունները» ձեռնարկություններին կամ հանրակացարաններին կից կարող են կազմակերպել անգրագիտության վերացման և քաղգրագիտության ու պրոֆեսիոնալ գրագիտության խմբակներ։

3. Բջիջների, տեղկոմների և բարձրագույն արհեստակցական կազմակերպությունների անդամներն ու աշխատողները պետք է սիստեմատիկ կերպով այցելեն «անկյունը», նրա հաճախորդների հետ զրույցներ անելու համար։

4. «Կարմիր անկյունի» աշխատանքը և այդ աշխատանքի ծավալումը հաշվի առնելու համար անհրաժեշտ է որագրության հատուկ մատյան ունենալ։

ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԱՐՀՄԻՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՄԲԻՆ ԿԻՑ ՖԻԶԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԽՄԲԱԿԻ

1. Խմբակի կազմակերպումը նպատակները ու խնդիրները

1. Միությունական ակումբին կից ֆիզիկական կուլտուրայի խմբակը կազմակերպվում է

աշխատում է նույն հիմունքներով, ինչ և մյուս խմբակները (քաղխմբակ, խմբական յերգի խմբակ և այլն, տես՝ սույն գրքույկում զետեղված «Բանակումբի որինակելի կանոնագրությունը»)։

Բանվորական ակումբ չունեցող ձեռնարկություններում ֆիզկուլտուրայի խմբակը կազմակերպվում է տեղկոմի կուլտ-հանձնաժողովին կից։

2. Ֆիզկուլտուրայի խմբակի նպատակն է՝ մության անդամներին մղել դեպի ֆիզկուլտուրա և դեպի սպորտ ու լավագույն կերպով համախմբել նրանց արհեստակցական միությունների շուրջը։

Ֆիզկուլտուրայի խմբակների խնդիրներն են.

ա) Մղել բանվոր դասակարգի առողջացման հարցին նվիրված պրոպագանդա.

բ) կանխել պրոֆեսիոնալ հիվանդացումներն ու պայքարել նրանց դեմ.

գ) ամրացնել միության անդամների մեջ ակտիվությունն և հասարակականությունն՝ ֆիզիքական կուլտուրայի միջոցով.

դ) ծառայել ամենալայն բանվորական մասսաների ֆիզկուլտուրական պահանջներին, նրանց համար կազմակերպելով եքսկուրսիաներ, ժողովրդական զբոսանքներ, խաղեր, ժամանցներ և ամեն տեսակի մարմնամարզական ու սպորտային զվարճանքներ։

2. Ղեկավարություն

1. Խմբակի գլուխ է կանգնում խմբակի անդամների ընդհանուր ժողովի կողմից ընտրված կազմակերպիչը, վորին հաստատում է համապատասխան ակումբի վարչությունը կամ համապատասխան ձեռնարկի տեղկոմը։

ԾԱՆՈԹ,—Խմբակի անդամների թիվը 50 ից ավելի լինելու դեպքում, ընտրվում է կազմակերպչին ոգնող ավագների խորհուրդ, 3-5 հոգուց բաղկացած։

2. Խմբակի կազմակերպիչն ակումբի վարչության կամ տեղկոմի հանձնարարությամբ գրանում և հրավիրում է խմբակի տեխնիքական աշխատանքների դեկավարներ.

ԾԱՆՈԹ,—Ֆիզիքական դաստիարակության տեխնիքական դեկավարը տեխնիքական պատրաստությունից դատ, պետք է միության կազմակերպության խնդիրներն ըմբռնող հասարակական գործիչ կազմակերպիչ լինի։

3. Կազմակերպիչը կարգավորում է խմբակի ներքին կյանքը.

ա) Կազմում է խմբակի աշխատանքների պլանն ու կարգը.

բ) կազմակերպում է ֆիզկուլտուրային նվիրված եքսկուրսիաներ, զբոսանքներ, և այլ

զբաղմունքներ սահմանում է խմբակի անդամների հերթապահության կարգը.

գ) խմբակի ներսում առաջ է բերում մրցության և բարի նախանձ.

դ) կատարում է վարչական անձի պարտականություններ՝ մասնայական աշխատանքի ժամանակ.

յե) կապ է հաստատում ֆիզկուլտուրակ.ն աշխատանք կատարող այլ կազմակերպությունների հետ՝ միասնական յելույթներ կազմակերպելու համար և այլն։

4. Խմբակի բոլոր անդամները պարտավոր են յենթարկվել ակումբի վարչության սահմանած կանոններին։ Խմբակի ներքին գործունեության սահմաններից դուրս յելնող բոլոր ձեռնարկումներն, ինչպես օրինակ, միջոցների հայթայթումը, մրցանդեսի կազմակերպում և այլն պետք է հաստատված լինեն ակումբի վարչության կամ տեղկոմի կողմից։

5. Խմբակն իրավաբանական դեմք չէ և իր գործունեության մեջ հաշվետու յե ակումբի վարչության կամ տեղկոմի կուլտհանձնաժողովի առաջ։

6. Ֆիզկուլտուրայի խմբակը դրամավորվում է ակումբի խմբակների համար գոյություն ունեցող ընդհանուր հիմունքներով և համաձայն

ակումբի ընդհանուր նախահաշվի (կամ ձեռնարկության տեղկոմի կուլտ-հանձնաժողովի նախահաշվի, յեթե ֆիզկուլտի խմբակը վերջինիս կից է գործում)։

3 ԽՄԲԱԿԻ ԿԱԶՄԸ

Խմբակի անդամ կարող են լինել արհմիության բոլոր անդամները և նրանց ընտանիքների անդամները, յեթե կհամաձայնվեն յենթարկվել տվյալ կանոնադրության և խմբակի ներքին կարգ ու կանոնին։

4. ԽՄԲԱԿԻ ԱՆՈՒՆԸ, ԴՐՈՇԱԿԸ, ՆՇԱՆԸ

1. Խմբակը կրում է այն ձեռնարկության կամ միության անունը, վորտեղ աշխատում են նրա անդամները (օրինակ՝ «Արարատ գործարանի ֆիզկուլտուրայի խմբակ», «Մետաղագործների միության ֆիզկուլտի խմբակ» և այլն)։

2. Խմբակի անդամները կրում են իրենց միության եմբլեմ ունեցող նշաններ։

3. Խմբակն ունի իր դրոշակը. դրոշակի վրա պետք է նկարված լինի համապատասխան միության եմբլեմը և նշանակված՝ ձեռնարկության ու շրջանի անունը։

4. Խմբակի բոլոր տեղական յելույթները

պետք է կատարվեն տվյալ միության և ձեռնարկության անունից. իսկ գավառական, հանրապետական և այլ յելույթների ժամանակ՝ միության անունից զատ պետք է հիշվեն նաև շրջանի կամ քաղաքի անունը։

5. ԽՄԲԱԿԻ ՑՐՈՒՄԸ

Խմբակի գործունեությունը միության կուլտ կրթական աշխատանքի նպատակներին կամ 1-ին կետին համապատասխանելու դեպքում, ակումբի վարչությունը կամ տեղկոմը խմբակը ցրում է կամ վերակազմության են յենթարկում։

ՑՐՈՒՄ
ՏՐԱՄԱԼՍ

-50-

14. — «Կանոնադրություն բանվորական գրադարանի . . . . . » — 15 կ.
15. ՉԵԿԻՆ.—«Ակնարկներ բանվորական շարժման պատմությունից . . . . . » — 35 կ.
16. Բժ. ՄԵԼԻՔՅԱՆ.—Սիֆիլիս . . . . . » — 3 կ.
17. Բժ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ.—Մալարիա . . . . . » — 5 կ.
18. — «Յերկաթ Ինտերնացիոնալ» ինստիտուտիվկա (սպառված) . . . » — 5 կ.
19. ԳԻՐԻՆԻՍ.—«Ի՞նչ է արհեստակցական արտադրական միությունը . . . . . » — 30 կ.
20. ՎԻՇՆԵՎԵՑԿԻ.—«Աշխատանքի հաշմանդամների ապահովագրումը» . . . » — 20 կ.
21. — «Գործարանեղկոմների կուլտ-հանձնաժողովների կանոնադրություն » — 5 կ.
22 Ակումբների, «Կարմիր անկյունների» և ֆիզկուլտի խմբակների կանոնադրություն 25 կ.
23. ՍԵՆՅՈՒՇԿԻՆ.—Ակումբային աշխատանքի խնդիրները (մոդուլի տակ է)
24. ՏՈՄՍԿԻ.—Արհշարժման հերթական խնդիրները (մոդուլի տակ է)

ՊԼԱԿԱՏՆԵՐ

1. «Բարգրացրու աշխատ. արտադրողականությունը» Գինը 15 կ.
2. «Վերաշինենք մեր յերկիրը» (5 գույն) » 15 »
3. «Կարդա միության վաստ անդամի մասին» » 15 »
4. «Սոցապահովագրության մասին (4 գույն) » 15 »
5. Բատրակ, լսիր Լենինին » 15 »
6. Ի՞նչ է պրոֆմիության անդամատոմը » 15 »
7. Կառուցող բանվոր, հիշիր (կրկնակի) » 30 »

Դիմել՝ Յերեվան, Հ.Ս.Մ.Խ սեցյան № 14
Адрес: Эривань, С. П. С. Армения

ՀՀ Ազգային գրադարան
NL0863955

1
2386

ԳԻՆՆ Է
25
ԿՈՊ.

Դիմել՝ Յերևան, ՀԱՄԽ սենյակ № 14
Адрес: Эривань, СНС Армении, комн. № 14